



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

«31» «հոկտեմբերի» 2019թ. № 597-Ղ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Փիրումյանի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի զեկուցագրով (մտ. 71795) ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Հրազդանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնի առաջատար մասնագետ, պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Տարակչյանի ծառայողական պարտականությունները չկատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) Ջրօգտագործող՝ Արամ Բարսեղյանի դիմումին (մտ. 35860) ընթացք չտալու պատճառները:

2) Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,

3) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

«31» «հոկտեմբերի» 2019թ.  
 ք. Երևան